ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/34

ք. Երևան «11» 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Փոքրիկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 **աշխատանքային օրվա** ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 810780 (ութ հարյուր տաս հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011035251 /1-ին շ./, 900011027977 /2-31 շ./<br>ՀՎՀՀ 02698732 | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բոշնաղյան 1-ին նրբ., տուն 8<br>Հեռ.՝ (091) 86-76-75<br>Էլ. փոստ՝ globalengineerllc@gmail.com<br>«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ,<br>Հ/Հ 16021021339500,<br>ՀՎՀՀ 08419558 |
| **Գլխավոր քարտուղարի տեղակալ՝** | **Տնօրեն՝** |
| ----------------------------- **Վ. Գասպարյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ----------------------------- **Գ. Փոքրիկյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված 1
« 11 » « 08 » 2020թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/34 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը ՀՀ դրամ, | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 98111140/63 | հեղինակային հսկողության ծառայություններ-1 | «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի սպորտ դահլիճի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 86580 | 1 | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թումանյան 85 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և դրակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 2 | 98111140/20 | հեղինակային հսկողության ծառայություններ-2 | «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 21500 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնաձոր համայնքի Բարիկավան 3/1 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և դրակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 3 | 98111140/21 | հեղինակային հսկողության ծառայություններ-3 | «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների | դրամ | 24300 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Սպանդարյան 3-րդ փողոց, շենք 23 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և դրակի տեխնիկական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հեղինակային հսկողության ծառայություններ | | | | | հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 4 | 98111140/22 | հեղինակային հսկողության ծառայություններ-4 | «Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 10300 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տեղ, Սիրան Բաբխուդարյանի անվան փողոց 7 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 5 | 98111140/23 | հեղինակային հսկողության ծառայություններ-5 | «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 27800 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաբաջանյան 2-1 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 6 | 98111140/24 | հեղինակային հսկողության ծառայություններ-6 | «Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 28400 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Եղվարդ | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 7 | 98111140/25 | հեղինակային հսկողության ծառայություններ-7 | «Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային | դրամ | 13700 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Նար-Դոսի 1 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հսկողության ծառայություններ | | | | | առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 8 | 98111140/26 | հեղինակային հսկողության ծառայություններ-8 | «Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 33100 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադե 7 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 9 | 98111140/27 | հեղինակային հսկողության ծառայություններ-9 | «Սիսիանի հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 29800 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Կամոյի 3 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 10 | 98111140/28 | հեղինակային հսկողության ծառայություններ-10 | «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 27000 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Շահումյան 20 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 11 | 98111140/29 | հեղինակային հսկողության ծառայություններ-11 | «Արմավիրի հ. 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության | դրամ | 22300 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 182 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծառայություններ | | | | | իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 12 | 98111140/30 | հեղինակային հսկողության ծառայություններ-12 | «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 12400 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հանրապետության 20 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 13 | 98111140/31 | հեղինակային հսկողության ծառայություններ-13 | «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 18600 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Սպարապետ Վազգեն Սարգսյան փող., 7/7 շենք | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 14 | 98111140/32 | հեղինակային հսկողության ծառայություններ-14 | «Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 37400 | 1 | Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 15 | 98111140/33 | հեղինակային հսկողության ծառայություններ-15 | «Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 34900 | 1 | Երևան, Բագրատունյաց 45 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 16 | 98111140/34 | հեղինակային հսկողության ծառայություններ-16 | «Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 41600 | 1 | Երևան, Մաշտոցի պող. 33 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 17 | 98111140/35 | հեղինակային հսկողության ծառայություններ-17 | «Երևանի հ. 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 24500 | 1 | Երևան, Լեփսիուսի 6 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 18 | 98111140/36 | հեղինակային հսկողության ծառայություններ-18 | «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 29500 | 1 | Երևան, Հովսեփ-Էմինի 8 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 19 | 98111140/37 | հեղինակային հսկողության ծառայություններ-19 | «Երևանի Հ. Օշականի անվան հ. 172 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության | դրամ | 28600 | 1 | Երևան, Մ. Բաղրամյան պող. 59ա | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծառայություններ | | | | | զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 20 | 98111140/38 | հեղինակային հսկողության ծառայություններ-20 | «Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 20000 | 1 | Երևան, Կիևյան 9 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 21 | 98111140/39 | հեղինակային հսկողության ծառայություններ-21 | «Երևանի Ռ. Սևակի անվան հ. 151 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 14100 | 1 | Երևան, Բաբայան 40 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 22 | 98111140/40 | հեղինակային հսկողության ծառայություններ-22 | «Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 14500 | 1 | Երևան, Տովկալ-Իսակովի 2/1 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 23 | 98111140/41 | հեղինակային հսկողության ծառայություններ-23 | «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 25200 | 1 | Երևան, Նոր-Նորքի 6-րդ զ., Գյուրջյան 13 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 24 | 98111140/42 | հեղինակային հսկողության ծառայություններ-24 | «Երևանի հ. 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 38100 | 1 | Երևան, Շիրազի 11 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 25 | 98111140/43 | հեղինակային հսկողության ծառայություններ-25 | «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 32100 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Արագած զանգված, 18 շենք | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 26 | 98111140/44 | հեղինակային հսկողության ծառայություններ-26 | «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 21700 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, Աբովյան 22 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 27 | 98111140/45 | հեղինակային հսկողության ծառայություններ-27 | «Արենիի պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների հեղինակային | դրամ | 12900 | 1 | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հսկողության ծառայություններ | | | | | զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 28 | 98111140/46 | հեղինակային հսկողության ծառայություններ-28 | «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 22100 | 1 | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Շատին | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 29 | 98111140/47 | հեղինակային հսկողության ծառայություններ-29 | «Վայքի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 17400 | 1 | ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ալավերդյան 17 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 30 | 98111140/48 | հեղինակային հսկողության ծառայություններ-30 | «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 15000 | 1 | ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |
| 31 | 98111140/49 | հեղինակային հսկողության ծառայություններ-31 | «Սպիտակի Անանիա Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության | դրամ | 25400 | 1 | ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Երևանյան խճ. 1 | Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ կրթական օբյեկտի վերանորոգման աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծառայություններ | | | | | զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

________ Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

________ Գ. Փոքրիկյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«11» «08» 2020թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/34 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111140/63 | հեղինակային հսկողության ծառայություններ-1 | | | | | | | | 86580 | 86580 | 86580 | 86580 | 86580 | 86580 |
| 2 | 98111140/20 | հեղինակային հսկողության ծառայություններ-2 | | | | | | | | 21500 | 21500 | 21500 | 21500 | 21500 | 21500 |
| 3 | 98111140/21 | հեղինակային հսկողության ծառայություններ-3 | | | | | | | | 24300 | 24300 | 24300 | 24300 | 24300 | 24300 |
| 4 | 98111140/22 | հեղինակային հսկողության ծառայություններ-4 | | | | | | | | 10300 | 10300 | 10300 | 10300 | 10300 | 10300 |
| 5 | 98111140/23 | հեղինակային հսկողության ծառայություններ-5 | | | | | | | | 27800 | 27800 | 27800 | 27800 | 27800 | 27800 |
| 6 | 98111140/24 | հեղինակային հսկողության ծառայություններ-6 | | | | | | | | 28400 | 28400 | 28400 | 28400 | 28400 | 28400 |
| 7 | 98111140/25 | հեղինակային հսկողության ծառայություններ-7 | | | | | | | | 13700 | 13700 | 13700 | 13700 | 13700 | 13700 |
| 8 | 98111140/26 | հեղինակային հսկողության ծառայություններ-8 | | | | | | | | 33100 | 33100 | 33100 | 33100 | 33100 | 33100 |
| 9 | 98111140/27 | հեղինակային հսկողության ծառայություններ-9 | | | | | | | | 29800 | 29800 | 29800 | 29800 | 29800 | 29800 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 98111140/28 | հեղինակային հսկողության ծառայություններ-10 | | | | | | | | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 |
| 11 | 98111140/29 | հեղինակային հսկողության ծառայություններ-11 | | | | | | | | 22300 | 22300 | 22300 | 22300 | 22300 | 22300 |
| 12 | 98111140/30 | հեղինակային հսկողության ծառայություններ-12 | | | | | | | | 12400 | 12400 | 12400 | 12400 | 12400 | 12400 |
| 13 | 98111140/31 | հեղինակային հսկողության ծառայություններ-13 | | | | | | | | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 |
| 14 | 98111140/32 | հեղինակային հսկողության ծառայություններ-14 | | | | | | | | 37400 | 37400 | 37400 | 37400 | 37400 | 37400 |
| 15 | 98111140/33 | հեղինակային հսկողության ծառայություններ-15 | | | | | | | | 34900 | 34900 | 34900 | 34900 | 34900 | 34900 |
| 16 | 98111140/34 | հեղինակային հսկողության ծառայություններ-16 | | | | | | | | 41600 | 41600 | 41600 | 41600 | 41600 | 41600 |
| 17 | 98111140/35 | հեղինակային հսկողության ծառայություններ-17 | | | | | | | | 24500 | 24500 | 24500 | 24500 | 24500 | 24500 |
| 18 | 98111140/36 | հեղինակային հսկողության ծառայություններ-18 | | | | | | | | 29500 | 29500 | 29500 | 29500 | 29500 | 29500 |
| 19 | 98111140/37 | հեղինակային հսկողության ծառայություններ-19 | | | | | | | | 28600 | 28600 | 28600 | 28600 | 28600 | 28600 |
| 20 | 98111140/38 | հեղինակային հսկողության ծառայություններ-20 | | | | | | | | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 21 | 98111140/39 | հեղինակային հսկողության ծառայություններ-21 | | | | | | | | 14100 | 14100 | 14100 | 14100 | 14100 | 14100 |
| 22 | 98111140/40 | հեղինակային հսկողության ծառայություններ-22 | | | | | | | | 14500 | 14500 | 14500 | 14500 | 14500 | 14500 |
| 23 | 98111140/41 | հեղինակային հսկողության ծառայություններ-23 | | | | | | | | 25200 | 25200 | 25200 | 25200 | 25200 | 25200 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 98111140/42 | հեղինակային հսկողության ծառայություններ-24 | | | | | | | | 38100 | 38100 | 38100 | 38100 | 38100 | **38100** |
| 25 | 98111140/43 | հեղինակային հսկողության ծառայություններ-25 | | | | | | | | 32100 | 32100 | 32100 | 32100 | 32100 | **32100** |
| 26 | 98111140/44 | հեղինակային հսկողության ծառայություններ-26 | | | | | | | | 21700 | 21700 | 21700 | 21700 | 21700 | **21700** |
| 27 | 98111140/45 | հեղինակային հսկողության ծառայություններ-27 | | | | | | | | 12900 | 12900 | 12900 | 12900 | 12900 | **12900** |
| 28 | 98111140/46 | հեղինակային հսկողության ծառայություններ-28 | | | | | | | | 22100 | 22100 | 22100 | 22100 | 22100 | **22100** |
| 29 | 98111140/47 | հեղինակային հսկողության ծառայություններ-29 | | | | | | | | 17400 | 17400 | 17400 | 17400 | 17400 | **17400** |
| 30 | 98111140/48 | հեղինակային հսկողության ծառայություններ-30 | | | | | | | | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | **15000** |
| 31 | 98111140/49 | հեղինակային հսկողության ծառայություններ-31 | | | | | | | | 25400 | 25400 | 25400 | 25400 | 25400 | **25400** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Գ. Փոքրիկյան
(ստորագրություն)

Կ.Տ